ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2016 թվականի N:87 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՀԱՍԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ոսկեհասկ համայնքի ղեկավարի 2016 թվականի մարտի 21-ի թիվ 62 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի փետրվարի 23-ի նիստի թիվ 71 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 23-ի նիստի թիվ 2 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Վարդան Այվազյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Էդվարդ Սիմոնյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ոսկեհասկ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Ջեմս Մուրադյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Նաիրա Հարությունյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Անահիտ Ներսիսյանի, Գոհար Պետրոսյանի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Սարգիս Մելոյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

3. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի հոկտեմբերի 17-ին Խորհրդի կազմում հաստատված Անահիտ Ավետիսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հոկտեմբերի 17-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Պետրոս Նալբանդյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Էդվարդ Սիմոնյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ոսկեհասկ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտաշես Սահակյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Տաթևիկ Մելիքյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Նարինե Մխիթարյանին, Ալինա Գրիգորյանին:

5. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N63 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի ապրիլի «20» N87-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՀԱՍԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Նալբանդյան Պետրոս	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Սիմոնյան Էդվարդ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Մելոյան Սարգիս	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Սահակյան Արտաշես	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Ավետիսյան Անահիտ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Մելիքյան Տաթևիկ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Գրիգորյան Ալինա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Մխիթարյան Նարինե	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է